ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի՝
19.11.2024թ. կայացած ընդլայնված նիստի թիվ 5 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հանդիպում ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանի, պրոռեկտոր Է. Ասրիյանի և գիտքարտուղար Մ. Հովհաննիսյանի հետ:

Գիտխորհրդի ընդլայնված նիստին ներկա էին գիտխորհրդի 29 անդամ և եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի 9 ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Դեկան
Գ. Բարսեղյանը, ողջունելով գործընկերներին, խոսքը փոխանցեց ԵՊՀ ռեկտոր պարոն Հ. Հովհաննիսյանին՝ ներկայացնելու կրթագիտական գործընթացին առնչվող հարցեր:

Ռեկտորը կարևորեց նման ձևաչափով հանդիպումները ԵՊՀ ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի հետ, և նշեց, որ ԵՊՀ-ում իրականացվող բարեփոխումները շարունակական բնույթ են կրում: Մասնավորապես՝ լսարանները վերազինվել են ժամանակակից տեխնիկայով, ինչն ապահովում է կրթական գործընթացի արդյունավետությունը: Հ. Հովհաննիսյանը նշեց նաև, որ կրթության որակի բարելավումը առաջնահերթ խնդիր է, ուստի կրթական ծրագրերի հավատարմագրումը այս համատեքստում կարևոր գործընթաց է: Ռեկտոր

Հ. Հովհաննիսյանը անդրադարձավ նաև ուսուցման կառավարման համակարգին, ինչպես նաև Registrar հարթակի լավարկման ուղղությամբ կատարված աշխատանքներին:

Գիտության ոլորտում գրանցած ձեռքբերումների մասին խոսելիս ռեկտորը նշեց, որ բարձարցել է գիտական տեսանելիությունը և նախորդ տարում Հայաստանի Հանրապետությունում Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանի ամսագրերում տպագրվել է շուրջ 1500 գիտական հոդված, որից շուրջ 500-ը Երևանի պետական համալսարանի աշխատակիցների հեղինակած հոդվածներն են: Հավելվեց, որ այդ հանգամանքը ԵՊՀ-ի պատմության մեջ աննախադեպ է:

Նշվեց նաև, որ ընթացիկ տարում եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում կազմակերպվել են մի շարք միջազգային գիտաժողովներ, ինչը կարևոր է միջազգայնացման և գիտական առաջընթացի առումով: Քննարկվեցին նաև գնահատման նոր կարգին, ինչպես նաև ուսանողական հարցումներին առնչվող հարցեր: Ռեկտորը հավաստիացրեց, որ հարցումների գործընթացի կազմակերպման ու բարելավման հարցը քննարկումների փուլում է: Քննարկվեցին նաև Erasmus+ միջազգային շարժունության ծրագրի մասնակցությանն առնչվող հարցեր:

Հ. Հովհաննիսյանը նշեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձը ամբողջությամբ կփոխհատուցվի: Հաջորդ ուսումնական տարիներին փոխհատուցումը կիրականացվի՝ հաշվի առնելով ուսման առաջադիմությունը՝ ՄՈԳ-ը:

Դասախոսների ատեստավորման կազմակերպմանն առնչվող հարցի հետ կապված նշվեց, որ կազմվելու է համապատասխան հանձնաժողով, և դասախոսները, կուտակելով համապատասխան կրեդիտներ, կօգտվեն աշխատավարձի բարձրացումից:

Պրոռեկտոր Է. Ասրիյանը պատասխանեց դասախոսական կազմի ներկայացուցիչների հարցերին, որոնք առնչվում էին ուսումնական ու կրթական գործընթացի կազմակերպմանը:

Ռեկտորը, եզրափակելով խոսքը, նշեց, որ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպումները բավական արդյունավետ են ինչպես գրանցած հաջողությունների ներկայացման, այնպես էլ կրթական ու գիտական գործընթացի արդյունավետության ուղղությամբ կատարվելիք աշխատանքների քննարկման առումով:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

19.11.2024թ.